Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետ

պարոն Ս. Հարությունյանին

Թիվ 58212116 քրեական գործով մեղադրյալ

Արթուր Սամվելի Սողոմոնյանի

պաշտպան՝ փաստաբան Մուշեղ Շուշանյանից,

հասցե՝ ք. Երևան, Մառի փողոց, շենք 5, բն. 44,

հեռախոս՝ +37491412220

Դիմում

Ի պատասխան իմ և իմ պաշտպանյալ Արթուր Սողոմոնյանի 28/11/2016թ.-ի դիմումի 09/12/2016թ.-ին փոստով ստացել եմ Ձեր 05/12/2016թ.-ի գրությունը, համաձայն որի՝ Արթուր Սամվելի Սողոմոնյանը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ ընդունման պահից գտնվել է բժիշկների մշտական հսկողության տակ, կատարվել է ֆլյուրոգրաֆիկ հետազոտություն, վիրաբույժի, թերապևտի, մաշկաբանի խորհրդատվություն, մաշկաբանի կողմից ախտորոշվել է ֆուրունկուլյոզ, նշանակվել է համապատասխան բուժում, պլանային կարգով կկատարվի մաշկաբանի կրկնակի խորհրդատվություն:

Ըստ բժշկական քարտի լուսապատճենի՝ 16/08/2016թ.-ին մաշկաբանի կողմից բժշկական քարտում կատարվել է գրառում, որ [Ա. Սողոմոնյանը] գանգատվում է դեմքի մաշկի ցանավորումից և քորից, նկատվում է տարածուն թարախաբշտային ցանավորում: Ախտորոշումը՝ ֆուրունկուլյոզ: Նշանակվել է հակաբորբոքային բուժում:

Հաջորդ գրառումը բժշկական քարտում կատարվել է 30/11/2016թ.-ին, ըստ որի՝ ընդունելության ժամանակ Ա. Սողոմոնյանը հայտնել է, որ ստացած դեղորայքային բուժումը օգուտ չի տվել: Նշանակվել է արյան և մեզի ընդհանուր հետազոտություն, մաշկաբանի խորհրդատվություն:

Բժշկական քարտի տվյալներից հետևում է, որ Ա. Սողոմոնյանի մոտ ֆուրունկուլյոզ հիվանդությունն ախտորոշվել է 16/08/2016թ.-ին և նշանակվել է հակաբորբոքային բուժում: Խնդրում եմ հայտնել՝ կոնկրետ ինչ բուժում է նշանակվել՝ ի՞նչ դեղորայք է նշանակվել, որքա՞ն է տևել բուժումը, ի՞նչ արդյունք է տվել բուժումը, ի՞նչ պարբերականությամբ է իրականացվել բժշկական հսկողությունը՝ հիվանդության դինամիկային և բուժման ընթացքին հետևելու համար, ի՞նչն է վկայում (որտե՞ղ է արձանագրված նշանակված բուժումը և

հիվանդության դինամիկան), որ նշանակվել է դեղորայք և իրականացվել է բժշկական հսկողություն:

Բժշկական քարտի տվյալներից հետևում է նաև, որ 16/08/2016թ.-ից հետո Ա. Սողոմոնյանը բժշկի ընդունելության է արժանացել 30/11/2016թ.-ին և բժիշկը նրանից է տեղեկացել, որ ստացած դեղորայքային բուժումը օգուտ չի տվել: Նշվածի կապակցությամբ խնդրում եմ հայտնել՝ ո՞վ (ովքեր) է պատասխանատու 16/08/2016թ.-ից մինչև 30/11/2016թ.-ը բժշկական օգնություն ստանալու տեսանկյունից Ա. Սողոմոնյանին անօգնական վիճակում թողնելու համար, ո՞րն է պատճառը, որ նա հիվանդության ի հայտ գալուց հետո մինչ օրս չի տեղափոխվել «Նուբարաշեն» ՔԿՀ բուժմաս կամ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ՝ նրա նկատմամբ ամենօրյա բժշկական հսկողություն սահմանելու և պատշաճ բուժում տրամադրելու նպատակով:

Ա. Սողոմոնյանի

պաշտպան Մ. Շուշանյան _____

12/12/2016թ.